4089

2004

ԱՐԿԱԾՈՒ

ԱՐԻՍՏՈՆՈՎՆԻ

թարգմանեաց Գ. Կոստանդեան
Ամայեկեանց.

Ի յիշատակ զգեցեալ Տիգրանայ
Ի Գեղաքայս հասակի հրաւիրեալ
Ի յԵրկին.

Ի ՀԱՄԻՐՈՒՆԻ
Ի ՏՊԱՐ Ս. ՄԵՍՐՈՊԱՆՑ.
1843

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՊ-ԻՆ ՍՍՍՀ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

26016-61

ԵՐԿԸՆԹՈՒԹԻՒՆ ԵՐԻՍՏՈՆԱՎԱՆԻ

Առաքինութիւն Սոփրոնիմոսի յորդորէր զնա 'ի քաջալերութիւն 'ի Դեղոս կղզի, յետ ձախողակ պատահարաց սպառելոյ զամենայն ստացուածս հարցն իւրոց նախնեաց 'ի նաւարեկութեան և յաղէտս այլ և այլս։ Երբեմն նա 'ի քնար ոսկի զանհաս խորութիւն սքանչելեացն Աստուծոյ զոր անդ պաշտէին, և մշակէր զՄուսայս յորոց սիրեցեալն էր։ Հետապրիր լինէր 'ի խաղաղութեան ամենայն գաղտնեացն բնութեան։ Յուզել յուզէր զընթացս լուսատուիցն և աստեղաց, զկարգս տարեաց, զկազմութիւն աշխարհի, զփոփոխութիւն տիեզերին որ 'ի պայքար ընդ ինքն մտանէր, զգօրութիւնս տնկոց և զկերպարանս կենդանեաց։ Փութայր սովաւ ըստ ամենայնի զհոգի իւր զարդարել առաքինութեամբ։ Այսպէս կամեցեալ բաղդն ընկճել զնա վերածեաց 'ի Ճշմարիտ փառս իմաստութեան։

Թէպէտ առանց ընչից՝ բայց գոհ ան-

Կրաչմէն քաղաքի Հոնիոյ հասատակելոյ 'ի բերիրալի տեղւոջ հրուանդանին՝ որ ձգեալ 'ի ծով թուի երթալ կցիլ 'ի կղզին Քիոյ 'ի բաղկաւոր հայրենին Հոմերոսի, ծնայ յազնուական բայց յաղքատիկ զարմէ։ Հայրն իմ Պողիսարատ սատիկ իմն ծանրաբեռնեալ բազմութեամբ ընտանեաց, անկար 'ի սնուցանել՝ ընկեցիկ արար զիս 'ի ձեռն ուրուք 'ի բարեկամաց իւրոց 'ի Թէոս։ Մերձ տեղւոյն այնորիկ ուր ընկեցին զիս՝ ունէր զբնակութիւն պառաւ մի Հերիտրէէ, որ զթացաւ էառ և դիեցոյց զիս կամեցեալ այծին 'ի խրճթի իւրում։ Բայց զի աղքատ էր յոյժ, 'ի հասանել իմում յարբունս՝ վաճառեաց զիս գերեվաճառի ումեմն ընդ որ տարեալ եղէ 'ի Լիկիա։ Վաճառականաս այս անդրէն վաճառեաց զիս 'ի Պատար Հոխի առն միոյ և առաքինւոյ Աւլսին անուանեալ։ Խնամ մեծ կալաւ մեծատունն այն 'ի վերայ իմ. 'ի մանկութեանս՝ երեւեցայ նմա հլու, զգոյշ, անկեղծ, յօժարակամ և յարմար առ ամենայն իրս պարկեշտս որով կամեցաւն զիս մարզել։ Նուիրեաց զիս գիտութեանցն զորս հաճի

Ընդդէմն. եւ զիս ուսանել զերաժշտութիւն, զկրթութիւն անդամոց, և 'ի վերս քան զամենայն զարհեստս վիրաբուժութեան մարդկան. շատիւրոր պատիւս ասացայ ես 'ի սուղ պահս յայս հարկաւորագոյն արհեստս։ Ընդարհատուն իմ Ընդդէմն ազգեաց ինձ և յայտնեաց զգանգրեան գաղտնիս հրաշալեաց։ Սիրէր զիս Ընդդէմն և առաւել քան զառաւել. յաւիշտակեալ էր 'ի տեսանել զվասն իմ խնամոցն իւր արդիւնաւորութիւն. շարժեալ 'ի վերայ իմ 'ի բազմազան շնորհաց իմոց 'ի կատարեալ բարեհաճութիւն, ազատ կացոյց զիս. և առ 'ի հոգալ ինձ հեռագոյ իմն երջանկութիւն, յղեաց զիս առ բռնաւորն Յամոսի Պոդիկրատ, որ 'ի ծայրագոյն իւր իշխանութեան զանգիտէր հանապազ, թէ մի գուցէ բաղդն անողորմ յետ երկարատեւ յաջողութեանն մատնեսցէ զինքն 'ի վատթարագոյն իմն թշուառութիւն։ Սիրէր զկնանս իւր հեշտալիս. այլ յերկիւղ կորստեանն առաւել ևս սիրէր զայն։ Ընարթեան հանդուրժեան զատաջս ունելոյ միշտ փոքրագոյն երևութիցն շարեաց, ժողովս

գործէր արանց հոչակաւորաց 'ի բժշկու-
թեան և 'ի վիրաբուժութեան։ Ընդաշան-
պաշտպանն կենաց իւրոց Պողիկրատ՝ ար-
ժան վարկաւ զի և ես զտայց 'ի կռնատս
անդ իմաստուն արհեստաւորաց. ել-
նաց յօժարեցուցանել, կարդեաց զիս 'ի
մեծափառութիւն, ճոխացոյց հարստու-
թեամբ, լցոյց առատ արդասեաց. և իմ
չկամելով կալ ընդդէմ բռնաւորին այն-
ոլիկ բնակեցայ 'ի Սամոս. ուր 'ի զարմանս
կային տեսանել թէ բաղդն շլացեալ հա-
նապազ 'ի թիկունս հասանէր նմա ըստ
ամենայն փափաքանացն։ Ամբարտաւանայր
նա ձեռնարկել 'ի պատերազմ յոր և յաղ-
թէրն իսկ։ Զոր 'ի նորոյ զիրս գժուարին
կամէր, որք և կատարէին իսկոյն։ Գոգցես
առեալ զձեռանէ նորա բաղդն տանէր
զնա շահատակել յամենայնի։ Ամենա-
ոլինակաւ տիրացաւ նա մեծագանձ հարստու-
թեանց։ Ամենայն ճոխութիւնք նորա բաղ-
մապատկէին օր քան զօր։ Թշնամիքն ամ-
ենայն կոխան լինէին ոտիցն։ Օրանայր և
անփոփոխ թուէր միշտ կեանք նորա։ Բա-
ռասուն ամ էր յորմէ հետէ յերկրանիկ զ-

թութեան իւրում բռնաւորս այս ունէր ըզ-
բաղդն իբր 'ի կալանս, առ 'ի շյանդգնելոյ
երբէք տալ ոտից իւր զխոշ և զոչինչ. և
չաարբանջելոյ բնաւ հակառակ խորհրդոց
դիտմանն թէ և չարագոյն քան զնորայն ի-
ցէ։ Այլ կասկածանաց 'ի միտս իմ սկսաւ
արծարծիլ վասն լիալիր երջանկութեան
առնս այսորիկ, և անհամբեր էի յայտնել
նմա զխորհուրդս գաղտնիս սրտի իմոյ։
Զգաց նա 'ի շարժմանէ իմում զայս վրդո-
վումն կրից։ Թէ և փափկացեալ յոյժ 'ի
հեշտութեան և փքացեալ 'ի կարողութեան,
ոչ տակայր տակաւին կրից մարդկութեան, երբ
'ի միտ բերէր զչիշատակութիւն Ստուածոյ
և զանհաստատութիւն մարդկայինս իրաց.
փութացաւ լսել յինէն զճշմարիտն և լցաւ
անհնարին երկիւղիւ։ Հուսկ յետոյ ընդ
երկար վարանմանն, որոշեաց 'ի մտի ընդ-
միջել կորստեամբ իւիք զընչեացս բարե-
բաստութեան իւրում։ Հնարուք տեսանեմ,
ասէ, զի չէ մարդ յաշխարհի որ ոչ զփորձ
դատնութեանցն առցէ բաղդի. որչափ
ինայէ նա մարդկան՝ այնչափ զարհուրե-
ցուցանէ 'ի տակալի փոփոխութեան իւ-

բում . 'ի ծայր երջանկութեանն բարձրա-
ցուցանէ առ 'ի զահավիժել 'ի յետին
թշուառութիւն ։ Այս որ միանգամ յայս-
չափ դարուց անտի առատացեալ եմ զա-
նազան բարեօք և բարկաւաճեալ հզօր զօ-
րութեամբ և գանձուք , պարտիմ սպասել
մնալ վաստուէր շարեաց շարագունից քան
զամենայն . եթէ ոչ կարեմ դարձուցանել
զահագին սպառնալիս նորա՝ ընդ առաջ ե-
լից ապաքէն դաւաճանութեանցն շողոմիչ
բաղդին այնորիկ ։ Խօսելով զբանս զայս
եհան 'ի մատանէ իւրմէ զմատանին թան-
կագին զսաստիկ սիրելին յաչս իւր , ձգեաց
առաջի աչաց իմոց 'ի բարձանց աշտարա-
կին 'ի ծով . յուսալով կորստեամբս այ-
սուիկ ամոքել զդառնութիւն բաղդին ,
հարկաւոր զոլով դէթ անգամ մի 'ի կեանս
ներքոյ անկանիլ տարբեր ընթացից նորա .
բայց յիմարաբար զառանցէր սա 'ի յըղ-
փալի յաջողութենէ իւրմէ ։ Ղարիք ընտ-
րութեամբ ընկալեալք՝ չեն չարիք . և զոր
ոք առնէ ինքեան՝ չթուի ընդ դժբաղդու-
թիւնս ։ Ղեն քան զոր յանկարծելիս տան
մեզ Ստուածք բռնադատեալ նեղու-

թեամբ՝ ցաւք։ Ընդէտ էր Պողիկրատ
Հշգրիտ հնարից զառաջս ունելոյ պատա-
հարաց բաղդին, հեռանալ խոհեմութեամբ
յամենայն անցաւոր բարեաց, և մեկուսի
մնալ բարեխառնութեամբ՝ յորոց մատու-
ցանէ նա մարդկան։ Խստապարանոցն այն
չհաճեցաւ երբէք ընդունել զզոհ մատան-
ույն. և Պողիկրատին զամ քան զգամ
առաւելոյր յաջողութիւն։ Ընկաւ մատա-
նին 'ի փոր ձկան և ձուկն 'ի յորս ձկնոր-
սին, և բերաւ 'ի տուն Պողիկրատին 'ի խոր-
տիկ սեղանոյ նորա։ Մատանին անց 'ի
ձեռն խոհակերի ուրումն պալատան և մա-
տուցաւ առ բռնաւորն. որ այլագունեցաւ
իսկոյն 'ի տեսանելն զայնչափ կամակորու-
թիւն բաղդին 'ի վերադարձուցանելն առ
ինքն զտուեալն միանգամ։ Բաղդաւո-
րութեանն չափ բարձրացաւ 'ի վերջին կէտ
վերադարձի գագաթան, և լցաւ ժամանակ
պատարուն բաղդաւորութեան փոխիլ իս-
կոյն 'ի ձախող պատահար սոսկալի։ Մեծ
թագաւորն պարսից Դարեհ Ս Հշտասպեան
ձեռնարկեալ 'ի պատերազմ ընդդէմ յու-
նաց 'ի կողմն Ասիոյ և կղզեաց ընդ ծովն

յունական, էառ զՊամոս. և ապարապետ նորա Օրոնդ կերաստիճան բարձրացոյց զբռնաւորն 'ի կախաղան։ Հաբէ. այրն՝ որոյ իշխանութիւն և փառք և աշխարհահռչակ բարեբաստութիւն անվախճան ինն երեքեր ամենեցուն, կորեաւ և վատանուն հանդիսացաւ յաշխարհի։ Ընդ այսպէս, ոչ այլ ինչ կարէ գուշակել մարդկան զդաժան աստիճան յետին թշուառութեան, որպէս բարեբաստիկ յաջողութիւն երջանիկ աւուրց։ Հաղգն այն որ խաղ անդուխ ընդ աւազանին առնէ մարդկան, կանդնէ զկործանեալն և կործանէ զկանգնեալն, զահավիժեաց զՊողիկրատ 'ի բարձանց անուոյ և վերածեաց զնա 'ի փառս յամենակերպ թշուառութենէ։ Պարսիկք ոչ տարապիր հանին զնա, այլ և առաւել մեծարեցին զարհեստն իմ վերարուժութեան և զբարեխառնութիւն, որով ցորչափ հաճելի էր առ բռնաւորն՝ վարեցայ ընդ ամենայն մարդիկ։ Ընդ որք ապաւինեալ 'ի խրոխտ մեծութիւն շարաչար վարեցան ընդ ամենեսին, 'ի հաճութիւն կամաց տեառց իւրեանց դատապարտեցան ըստ արժանւոյն։ Ոչ ու-

մեք շարիս ինչ գործեալ էի ես, այլ առա-
ւել ևս բարերարեալ, վասն որոյ խնայեցին
զիս սուրբք յաղթանակաւորաց և մեծարե-
ցին իսկ յարդանաւք։ Իւրաքանչիւր ոք ուրա-
խակից էր ընդ իս յանվնաս ազատութիւն
իմ. սիրելի եղէ յաչս ամենեցուն և վայե-
լեցի զանչուսալի իմն զհանդիսա։ Ոչ ոք
նշանակեաց յիս, ոչ խստութիւն կրից, ոչ
պոռոգութիւն մատաց, ոչ անյարգ ցանկու-
թիւն, ոչ անուղիղ կամս։ Վարեցի զկեն-
ցաղ 'ի Պատոս տակաւին ամս բազումս
բաւական հանդստութեամբ. բայց 'ի
վախճանի բորբոքեցաւ յիս եռանդն սի-
րասիրութեան և ազդեցաւ ինձ անձուկ
փափաքանաց տեսանել զ Յիկիա, ուր ան-
ցուցի երբեմն զհեշտալին իմ զմանկու-
թիւն. ուր և ակն ունէի գտանել զմեծ
բարերարն իմ զԱստն, որ ոչ միանգամ
անցց և լցոյց զիս արհեստագիտութեամբ՝
այլ և յարմարեաց ինձ զհետապայ իմն
բաղդաւորութիւն անձին։ Բայց աւաղ.
'ի հասանել իմում ասա՝ գուժեաց յա-
կանջս իմ մահ սիրելի Տեառն իմոյ Աստ-
ծոյ, և կորուստ սատացուածոյն տարօրինակ

չարակրութեամբ. 'ի ծերութեանս չորայ սփոել 'ի վերայ գերեզմանի նորա ծաղիկս անթառշամս և ցողեցի զարտասուս 'ի վերայ մոխրոյ նորա արձանագրութեամբ պատուելի գամբարանին։ Հարցի անդ ապաքէն բազմաց զպատահարաց անցելոց ընդ որդիս նորա. վեր 'ի վերոյ իմացայ միոյ միայնոյ զոլ յորդւոցն, որ չառանելով ուղղութեանն 'ի Հայրենիս առ ամօթոյ անցեալ է նաւու 'ի սար աշխարհ. անցուցանել զնշխարեալ աւուրս կենացն 'ի յանանուն կղզի ինչ, և նաւաբեկեալ առ ընթեր Կարպաթի կղզւոյն յիսպառ ջնջումն զյիշատակ բարերարին իմոյ Ղլսինի. թախծութեամբ լցայ յոյժ և մտածեցի զէթ գնել զտուն և զշրջակայ դաշտս նորա զարգասաւորս. զոհ էի 'ի վերատեսութիւն տեղւոյն որոյ քաղցր երևոյթն ներկայացուցանէր աչացս զզուարճալի զայն անցրս մանկութեան և զյիշատակ երախտաւորին իմոյ։ Բուէր ինձ յայնժամ թէ էի տակաւին 'ի ծաղկափթիթ հասակի երբ ծառայէի մեծատանն Ղլսինի։ Հետ գնելոյ 'ի պարտատեարցն զբարիս ժառանգութեան

նորա, պարտ եղեւ ինձ գնալ միանգամ 'ի Կլազոմէն։ Այր իմ Պողիսորատ և մայր իմ Փիլիտ մեռեալ էին 'ի վաղուց իսկ։ եղբարք իմ գեռ ևս կենդանիք՝ ատելութեամբ վարէին ընդ միմեանս։ Երբ հասի ես 'ի Կլազոմէն՝ առժամայն ներկայացայ նոցա անպատճոյճ իմն հանդերձիւք աղքատի, ծանօթս տալով նոցա զինէն 'ի նշանացս որով 'ի մանկութեանն խնամ տանին ծնօղք նշանակել 'ի տղայս։ Այրացան նոքա զի բազմացաւ թիւ ժառանգորդաց Պողիսորատին, յորս բաժանել պարտ էր զմնացեալսն յընչից։ Ներկրայս կամեցան ձգել զհարազատութիւն իմ, և վիճէին ընդ իս իբրեւ ընդ օտարածնի։ օրինաց դատաւորաց անարդեալ՝ մերժեցին զիս յեղբայրութենէ իւրեանց։ Եւ ես առ 'ի պատժել զամարդութիւն նոցա՝ հաճեցայ հեռի մնալ 'ի Համածնունդ հարազատութենէ նոցա, և խնդրեցի զի և նոքա յաւիտեան՝ մերժեսցին 'ի ժառանգութենէ իմմէ։ զոր և դատաւորք իսկ հրամայեցին հաստատուն օրինադրութեամբ։ ապա ցոյց եառ նոցա զհարստութիւնսն զորս տարեալ

էի անդ 'ի նաւ. յայտնեցի նոցա թէ այն Ընիստոնովն եմ ես՝ որ ստացեալ զանբաւ հարստութիւնս, զանձեցի յաւուրս բռնաւորին Սամոսի Պողիկրատայ, և թէ չէի երբէք ամուսնացեալ։

Սորջայան եղբարք իմ վասն այնպիսի անիրաւութեամբ վարելոյ ընդ իս. և ցանկութեամբ յափշտակելոյ յաւուր միում զժառանգութիւնս. զյետին ճիգն ճգնեցան բայց ընդունայն առ անդրէն լծորդութիւն յազգականութիւն իմ։ Նրիկպառակութիւն իւրեանց պատճառ եղեւ վաճառելոյ զինչս հօր մերում։ Նոքա զնեցի զնոսա զամենայն, և նոքա տրտմեցան յոյժ, 'ի տեսանելն անցեալ 'ի ձեռս իմ զինչս հօրն մեր, զորոյ ոչ կամէին տալ ինձ և զփոքրագոյն մասն իսկ. այսպէս անկան ամենեքեան 'ի յետին աղքատութիւն. կայի ճնացի ես մինչ զի բաւական իմն զգացին նոքա ըզսիրալանս իւրեանց։ Բայց զի չէ պարտ յամառիլ 'ի կամս. 'ի գութ շարժեցայ վերստին 'ի վերայ նոցա իբրև 'ի վերայ հարազատ եղբարց՝ ցուցանելով զքաղցր բնութիւն իմ ներեցի շարակամութեանցն.

ընկալայ զնոսա 'ի տուն իմ և իւրաքան-
չիւրոցն մէն մի առանձին եռու շահել զինչս
վաճառականութեամբ ծովու. հաշտեցու-
ցեալ միաւորեցի զնոսա յեղբայրական կա-
պակցութիւն. նոքա՝ և որդիք իսկ նոցա
բնակէին սերտ խաղաղութեամբ ընդ մար-
գահաւ իմով. ես հայր հասարակաց եղէ
նոցին ընտանեաց. և ինքեանք մտադիւր
պարապմամբ 'ի գործ աշխատութեան, հա-
ւաքեցին վաղվաղակի զչափազանց ճոխու-
թիւնս և զառատ արդիւնս միաբանութեամբ
իւրեանց. Ա՛յլ սակայն որպէս տեսանէք՝
ծերութիւն եկեալ հասեալ 'ի յաղթահա-
րել զիս, բաղխէ զդուռն կենաց իմոց, սպի-
տակացոյց զհերս իմ և խորշոմեաց զդէ-
մըս. զգայի ապաքէն յիս թէ չունիմ այլ
և ա վայելել զկենցաղ 'ի կատարեալ հան-
գըստութեան. գոնէ յառաջ քան զհրա-
ժեշտ տալն իմ յայսմ կենդանութենէ
տեսից միւսանգամ զերկիրն որ շարժէ
զիս քան զհայրենիս անդամ առաւել.
ուր բարուք գտանիցակեցայ ընդ խոհեմ
կառավարութեամբ առաքինւոյն Ա՛ղբինի,
Ա՛ծգանելով ընդ ծով հանդիպեցայ վաճա-

26016-4

ռականի միջում 'ի կղզեացն Կիւկղադայց որ
աւետաց ինձ թէ դեռ կենդանի է 'ի Դե-
ղոս մի յորդւոցն Օրսիլոքի, որոյ ընթացք
նմանօրինակ իսկ է առաքինութեան հաւոյն
իւրոյ քաղցրաբարոյին Ալսինի։ Դարձայ
'ի Ճանապարհաց իսոց և աճապարեցի գալ
ասա, յուզել և գտանել սրբազան պաշտ-
պանութեամբ Ալոզոնին՝ զբարեյիշատակ
ճնացորդ ազնուական ընտանւոյն, ում անձ-
նանուէր եմ ես բոլորովին։ Սուղ է ժամա-
նակ մնացեալ աւուրցս. Զարկեանք թըշ-
նամիք քաղցրիկ այսր հանդստեան, զոր Ա-
տուածք անագան ուրեմն շնորհեն մահկա-
նացուացս, տագնապին կորզել յինէն զա-
ւուրս և վանել զկեանս։ Յօժարակամ զոհ
երթամ ես անողորմ մահուան, եթէ յա-
ռաջ քան զփարատել լուսոյ աչացս և
զմթագնել աւուրցս, կարացից տեսանել
անգամ մի զպատուելի Թոռն Տեառն ի-
մում։ "Խոսեաց ապա ոմ հիւրասէր, որ
'ի մի և 'ի նոյն կղզւոջ բնակիս. ունիք
ինչ տեղեկութիւն զնմանէ. կարօղ էք տալ
ինձ գտանել զնա. եթէ առնէք զուք ըզ-
մարգասիրութիւնս զայս, վարձահատոյց

ընդին Աստուածք 'ի տրիտուր փոխարինի տալ ձեզ տեսանել 'ի վերայ ծնգացդ զորզուդ որդիս և զորդիս նոցա մինչ 'ի հինգերորդ սերունդ քոյ։ Պաշտպանութիւնն երկնային խնամ կալցի պահպանել զտուն առաքինւոյդ 'ի խաղաղ հանդարտութեան առատածաղիկ օրհնութեամբ"։ Ի խօսել Աբրահամովի սոյնօրինակ՝ հիացաւ արքանչացաւ Սոփրոնիմոս. հեղոյր արտօսր խառն ընդ հեշտականին և ընդ տխրականին. բայց զկորուստ պերճաշուք տոհմականութեանն և խնդայր ընդ դիւտ ժամանակակից երախտագիտի հաւուն իւրոյ. ապա անկաւ յոտս ծերունւոյն, փարեցաւ սեղմեաց և գժուարաւ իմն ասաց զբանս զայս հատկեալ 'ի հեծեծանացն։

Այս եմ ո՞վ հայր պատուելի, ես եմ այն զոր դուքդ խնդրէք. ես Սոփրոնիմոս անարժան թոռն բարեկամին ձերոյ Աբրահամի. և ո՞չ երկրայիմ երբէք թէ չիցեն Աստուածք առաքեալ զքեզ ապր 'ի ընտրութիւն ցաւոցս և 'ի թեթևութիւն թշուառութեանս։ Նրախատակիտութիւնն բարձեալ յերեսաց երկրէ, ահա երևի 'ի

քեզ միայն. լուայ երբեմն 'ի պատանեկու-
թեան իմում փոքր 'ի շատէ զանուն ձեր,
որպէս թէ մեծատուն ոմն հռչակաւոր 'ի
Սամոս յառաջագոյն 'ի տուն հաւուն իմոյ
իցէ մնեալ. բայց ըստ որում 'ի մատաղ
հասակի 'ի յօրորոցի եմեղ զիս Օրսիլ
հայրն իմ վաղամեռիկ, չգիտացի զայսոսիկ
բայց խառնիխուռն բանիւք աստի և անտի.
վասն որոյ յերիկայս եղէ և չհամարձակե-
ցայ զալ առ ձեզ 'ի Սամոս, բաւականա-
լով զոյգն պարենիւք կենաց ապրիլ 'ի կըղ-
զիս յայս մխիթարելով զիս 'ի թշուառու-
թեան իմում ատելութեամբ ունայն հարըս-
տութեանց, և քաղցրիկ գործադրութեամբ
մշակելոյ զՍուզայս 'ի մեհեան Ապողոնի.
ժուժկալութիւնն որ ունակացուցանէ ըզ-
մարդ շատանալ սակաւուք և հանդարտ
կեալ, եղև ինձ ցարդ սիրելի քան զա-
մենայն ճոխութիւնս ընչից.

Լսելով զայսոսիկ հասին 'ի տաճարն
ուր Սոփրոնիմոս առաջարկեաց Աբիատա-
նովսի մատուցանել զաղօթս իւր և զզոհ.
նուիրեցին անդ Աստուածոյ զոչխարս եր-
կուս անարատս սպիտակ իբրեւ զձիւն, և

գլուխ մի յորոյ 'ի Ճակատի նիշս լուսնա-
ձևս նկարիւր 'ի գոգ եղջերուաց։ Աղրգե-
ցին յայնժամ զերկս քաղցրանուագս 'ի
պատիւ Աստուծոյն որ լուսաւորէ զտիեզե-
բրս, կարգադրէ զէղանակս, նախագահ
բազմի 'ի գիտութիւնս, և սիրէ զդաս
ինքնեակ Մուզայից։ Աղեալ երիզքեան 'ի
տաճարէն անցուցանէին զժամանակն պատ-
մելով հանապազ միմանց զանցս իրերաց։
Սոփրոնիմոս հիւրընկալեաց զԱրիստոնովս
'ի տուն իւր, և խանդակաթ ինն պատուով
որով մեծարէրն Աքսին՝ եթէ էր գեռ կեն-
դանի, մեծարեաց զնա։ Յետ աւուրց ինչ
այնոցիկ, յորդորանօք Արիստոնովսի նա-
ւապետաց լինել դէպ 'ի Իկիա՝ առագաստ-
ցին 'ի միասին և հասին յաջողութ 'ի նպա-
տակ Ճանապարհորդութեանն իւրեանց։ Ար-
իստոնովս տարաւ զՍոփրոնիմոս 'ի պտղաբեր
պարտէզ գետեզեր միոյ։ Զանազգս Աստղն
'ի գառնալ իւրում յորսոյ ընկղմեալ է 'ի
հեղեղ գետոյս, և մաքրեալ 'ի փոշւոյ ըզ-
խարտեաշ զէս իւր գեղեցիկ։ Յերկայնու-
թիւն հեղեղիս գտանէին կաղամախք և ու-
ռենիք, որոց դալարագեղ կանաչութիւն

ասէին զքոյնս անհամար թռչնոց, և անզգաստար գայլայլիկք նոցա երգոց և դաշնակութիւնք ձայնից սքանչելի յօրինէին զվայրն։ Զնոսն յորդահասան՝ փրփրագէզ խոխոջմամբ անկանելով 'ի ժայռէ միոյ խորտակիւր 'ի մէջ փոքրիկ գայլախազից։ Ամենայն տարածութիւնն ծածկեալ էր ոսկեգոյն հնձուք. գարեանդք և բլուրք բարձրացեալք յայն խրոխտ ամփիթէատրոն բեռնաւորեալ էին կոճեղօք, որթովք, և տրնկովք պտղաբերօք։ Վեհերևոյթ բնութիւնն անդ ծիծաղէր և կայտառայր. երկին քաղցր և պարծան. երկիր միշտ պատրաստ առատաձեռնել յարգանդէ իւրմէ զնորանոր առատութիւնս արդասեաց 'ի վարձ երկանց արօրագրին։ Զրթալով ընդ առաջ յերկայնութիւն գետոյն՝ եռեալ Պատրոնիմոս զառուն մի, որ թէպէտ միջակ և անպաճոյճ՝ բայց Ճարտար համեմատութեամբ բարուք յօրինեալ. ոչ զառանիւր անդ ոչ մարմարիոն, ոչ ոսկի, ոչ արծաթ, ոչ ժանիք փիղոց և ոչ ծիրանիք, այլ ամենայն մաքուր էր և լի վսեմութեամբ և վայելչաշուք զարդարեալ առանց մեծագործութեան. Հոսէր

'ի միջոյ գաւթին աղսիւր՝ հեզիկ, գործե-
լով անձուկ խողովակս յերկայն գալարա-
վայրի անդ։ Ֆիէպէտ պարտէզն չէր այն-
չափ ընդարձակ, բայց ունէր զծառս օգ-
տաբերս և բազմապտուղս 'ի սկսաս սննդոց
մարդկան, և յերկոսին կազմունս անտաւոր
բարձրացեալ յոյժ 'ի յօդս, որոց արմատք
հնացեալք իրրեւ զերկիր մայր իւրեանց,
կորացեալ ստուար ոստք նոցա արդիք լի-
նէին լուսաւոր նշուլից արեգական, ստուեր
ընդ իւրեամբ զործելով։ Մարն 'ի տահ
անդր 'ի ձաշ համագամ կերակրոյ, զորս
բնութիւնն պատրաստէր 'ի պարտէզս։ ոչ
բազմախորտիկ զրգանք սեղանոյ՝ զորս ան-
յաղ որկորաժէտութիւն մարդկան կազմէ
'ի թանկագին իրացն հեռաւոր յաշխարհաց։ այլ կաթն անոյշ քան զոր Ալպոզոն
հոգայաւ կթել 'ի խաշնարածութեան իւ-
րում 'ի տան արքային Ամոմեթի, և մեղր
գերազանց քան զմեղուացն Հիպլայ 'ի Սի-
կիլիայ, կամ զՀիմեթ լերինն յԱտտիկէ։
Լին անդ և ընդեղէնք պարտիզին և պը-
տուղք ծառոցն։ Գինի ազնուագոյն քան
զՆեկտար՝ մատուակիւր 'ի ջինջ ըմպա-

նակս։ Ի ժամ այսր չափաւոր կերակրոյ
չկամեցաւ Արիստոնովս բազմիլ ի սեղան։
Այսպէս ընդ զանազան պատճառանօք ծած-
կեաց զպարկեշտութիւնն, որով ընթանայր
երբեմն առաջի Աղսինի. բայց ապա ի
ոտիպմանէ Պոփրոնիմոսի յայտնեաց թէ
չհամարձակի կերակրիլ ընդ թոռանն Ա-
սինի, որ ընդ երկար ժամանակ գործածեալ
էր զնոյն սեղան. ահա տեղին, ասէ, ուր
իմաստուն ծերունին կերակրէր. ահա ուր
խօսակցէր ընդ բարեկամս. ահա ուր յոգ-
նակերպ խաղս խաղայր. ահա ուր շրջագայէր
ընթեռնլով զՀոմերոս և զՀեզիոդոս. ահա
ուր հանգստանայր ի գիշերի։ Ցուցանե-
լով զտեղիս և յիշելով զպարագայս զալ-
ստսիկ՝ շարժեցաւ սիրտ նորա ի գորովոյ և
հեղուր արտօսր յաչսոյն։ Եւ յետ ընթերցա-
ցն տարաւ զՊոփրոնիմոս տեսանել զդեղե-
ցիկ մարդագետինս ուր թափառէին մեծա-
մեծ հօրանք բառաջելով յեզերս գետոյն.
ապա զՀոմս խոյոց որ դառնային ի պա-
րարտ յարօտոյ. ոչխարք մայեցողք և կաթ-
նալիցք ձգէին յետուստ զդառնուկս ոս-
տոստունս. ի զննին կային ամենատէք

նկատել զփութաջան մշակս սիրոյս աշխատութեանց 'ի յօգուտ տեարց իւրեանց, որոց քաղցր մարդասիրութիւն ամոքէր ըզդառնութիւն քրտանցն։

Յետ ցուցանելոյ Պոփրոնիմոսի զառնայս, զմշակս, զխաշինս և զարդաւանդ անդաստանս բարւոք մշակեալս, ասէ, Ամիստոնովս. Ամենայն սոքա ժառանգութիւն նախահօր ձերում են, և ահա կամաւոր յոժարութեամբ կարդեմ զքեզ յիշխանութեան տեղւոյս, և զոհ սրտիւ տէր կացուցանեմ զքեզ ամենեցունց. կեաց երջանիկ վայելել զսուտ և պատրաստել արթնութեամբ 'ի մի գովելի վախճան իրրև զհաւքս։ Հանդիսացոյց իրաւամբք օրինաց 'ի նոյն պահու զառուշութիւն իրացն շքեղութեամբ, և յայտնի հրաժարեցոյց զժառանգութիւն հարազատ ժառանգորդաց իւրոց, եթէ հակառակ երցեն ապերախտք վասն պարգևացն լինելոյ թոռինն Ամինի բարերարի իւրոյ։ Նայց Ամիստոնովսին շեղև բաւական սիրտ շատանալ։ Զարդարեաց նաև բոլորովին զառնն նորանոր կարասիւք անպաճոյճ բայց պարկեշտ, թեթևագին բայց շքեղ. լցոյց շտեմարանս ճոխագոյն

պարգևօք Դեմետրեայ և զտիկան գինւով
Ռիայ, արժանի մատուակելոյ 'ի ձեռաց
Գանիմէդեայ 'ի խնջոյս Ընթամաղդայ. Համ-
բարեաց անդ և գինի Բարմենեան ընդ
ճոխ պիտոյիցն մեղու Հիմէթայ և Հիպլայ
և քաղցր իւղոյն Ատտիկեայ. կուտեաց 'ի
նմա առատութեամբ ղեղեմն ձիւնագոյն և
զպատուական մորթս գողտրիկ խաշանց ա-
ղօտականաց 'ի լերինս Ընբատիոյ և 'ի
պարարտ հովիտս Սիկիլիոյ. այս ամենեան
բարգաւաճութեամբ ետ զտուն իւր Սոփ-
րոնիմոսի, ևս և յիսուն տաղանդ ոսկի.
Իսկ վասն ազգակից ժառանգորդացն իւրոց
պահեաց գինչ մեծագինս զոր ունէր 'ի
'ի Կլազոմէն, 'ի մերձակայս Օմիւռնոյ 'ի
Լէպէտ և 'ի Կորոփոն. զհատատուն տու-
չութիւնս զայս առնելով Ընիատոնովս նա-
ւագնաց եղեալ վերադարձաւ 'ի Յոնիա.
Սոփրոնիմոս զարմացեալ ընդ այնչափ շքե-
զապանծ բարերարութիւնս նորա և շար-
ժեալ յոյժ՝ ընկերէ նմա մինչ 'ի նաւ ար-
ասասուաթոր աչօք և լի տրամութեամբ, և
անուանէր միշտ զնա՝ Հայր, և գրկախառ-
նէր ընդ նմա. Հոգմունք յաջողակք օ-

ժանդակեալ հասուցին զնա վաղվաղակի
'ի տուն իւր. յոր ակնկատոյց լեալ աղ-
գականաց տհաճութեամբ, վասն պարգևե-
լոյն Սոփրոնիմոսի, ասէ. Եթէ ընծայ-
ելոյն յինէն թուին բարերար տեառն իմոյ
կացջիք հակառակ՝ պատուիրեմ սատակ 'ի
վերջին կետ կենայս, աղքատացն Յոնիոյ
բաշխել զմնացորդս ընչից. ապա թէ ոչ՝
ձեր են ամենայն տոքա։ Խմաստուն ծերս
այս կեալը 'ի խաղաղ վայելումն բարեաց
զորս Աստուածք պարգևէին նմա վասն ա-
ռաքինութեան։ Թէպէտ խորին իմն ծե-
րութեամբ տկարացեալ, բայց 'ի ցոյց շա-
փաղանց երախտագիտութեանն երթևեկէր
տակաւին ամի ամի 'ի Լիկիա 'ի տես Սոփ-
րոնիմոսի և 'ի նաւթարերութիւն գերեզ-
մանին Աստնի, զոր զարդարեաց մեծամեծս
իմն Հարստութեամբ քանդակագործաց։
Հրամայեաց ևս թէ իւր իսկ ահիւն մարմ-
նոյն ամփոփեսցի յետ մահուանն 'ի նոյն
գամբարան. որպէս զի զվերջին հանգիստ
ուցէ ընդ երանելիսն մոխրոյ սիրելի
տեառն իւրում։ 'Ի գարնան իւրաքանչիւր
ամի՝ անձկալի փափաքանօք տեսութեանն

ակն դիտեալ առ Ծովակողմն, ապասէր Պոփ-
րոնիմոս վերերևման բարեբեր նաւուն Ը-
րիստոնովսի։ Յամենայն 'ի նոյն եղանակի
վայելէր նա զբերկրութիւն նկատման ա-
ռագաստալից նաւուն 'ի հեռուստ, 'ի միջոց
սպառնական կոհակացն ալեաց։ Ը.յս ե-
բեռոյթ և զալուստ բարեկամին՝ քաղցրագոյն
էր նմա քան զամենայն շնորհս պարգևացն
վերածնելոց մեզ 'ի բնութենէ, յեռ անա-
չառ խստութեան զառնասաստիկ ձմեռան։

Աղև զի 'ի միում ամի չտեսանէր զընթ-
թացս ցանկալի նաւուն. վասն որոյ հե-
ծէր զառնապէս. տրտմութիւն և երկիւղ
նկարեալք էին յերեսս նորա. քաղցր այն
նինջ սփոփարար՝ փախստական երթայր
յարտեւանացն. համադամ կերակուրք գան-
նացեալ էին 'ի քիմս նորա. սուղ իմն
աղմուկ զարհուրեցուցանէր զնա. միշտ 'ի
Ծով, միշտ 'ի նաւատեղին, միշտ 'ի զուն
նաւահանգստին դիտէր։ Հարցանէր ում
և պատասխէրն. արդեօք եկեալ իցէ սիրե-
լին իմ, արդեօք երևեալ իցէ բարեբարն
իմ... տեսաւ յանկարծուստ նաւ մի բայց
աւաղ չէր 'ի նմա Ը.րիստոնովս, այլ Ը-

բիաառնուվսին . . . զինչ . . . . ամիւն յարծաթեայ Սափորի . զոր Ամբիկղէս նոյնասի՝ բարեկամ մեռելոյն , զորովական հաւատարմութեամբ կատարեալ զյեռին կոմս նորա բերէր թախծութեամբ ։ Սերձեցաւ Սոփրոնիմոս և երկոյունց իսկ պակասիր բան , և հնձկլտանաք իմն արտայայտէին գժուարաւ զմիտս միմեանց . . . . համբուրեաց եթաց զսափորն արտասուօք և հաւաչեաց . . Ա՛հ . . . ծերունի . զինչ գործեցեր զայս . . . . գու մխիթարութիւն իմ . գու պատճառ երջանկութեանս . վասն էր լցեր զիս գառնակսկիծ արտմութեամբ . չգացի երբէք քան զայս աղեսագոյն ցաւ յաշխարհի ։ Քաղցրանայ ինձ մահն արժանացուցիչ ծառայութեան ձերոմ՝ ի դաշան Աղիւսեան . ուր ոգիք երջանկաց վայելեն զերանութիւն յաւիտենական . զոր արդարութիւն Աստուածոյ կազմէ առաքինեացս Գու ուսուցեր յաւուրս մեր զուղղութիւն գբարեպաշտութիւն և զերախտագիտութիւնն զիսպառ բարձեալն յերեսաց երկրէ ։ Գու ցուցեր յերկաթեայ դարուս գբարութիւն և զանմեղութիւն ոսկեղէն

յարուն։ յառաջ քան զպատկել զքեզ 'ի հանգիստ անմահութեանն Աստուածք շնորհեցին քեզ ասա 'ի սարինս երջանիկ իմն, յարկելի և խոր ծերութիւն։ այլ ելզուկ, պարտ էր քեզ մշանջենաւորել առ մեզ։ առանց քո լինի ինձ ծերութիւնն ծանրութիւն։ Ո՛վ ողի գերաշխարհիկ։ երբ ապաքէն եկիցս առ քեզ։ անձինն երիրպագելի, եթէ զդաս դու տակաւին, իմանայս աներկրայ զաերկրութիւն միաւորութեան քոյ ընդ մոխրոյն Աստնի։ ընդ որս և իմքն խառնեսցին յաւուր միում։ Փոփեալվ զիս առժամն նշխարօք սիրելոյս, հաւատամ թէ զեռ կեայ Աբիսաղոմս։ Ո՛վ հայր գերաշնորհ, ուշ երբէք մեռանիս դու։ կենդանի մնաս դու 'ի խորս սրտիս, գիւրին է ինձ զիս ինքն մոռանալ, քան զերանելի առաքինիս՝ որում պարտիմ ես զամենայն յամենայնի։

Այսպէս հեծկլատանօք և հառաչանօք եդ Սափրոնիմոս զսափորն 'ի գերեզման Աստնի։ եղեն զդոհս արեամբ որոց հեղհեղեաց 'ի վերայ հոզաշէն սեղանոյն 'ի շնչաստատ դամբարանին։ սփոեայ անդ զանոյշ

հեղանիւթս առաւ նուիրագն գինւոյ և կա-
թին։ Ոչխաց անդ զբուրմունս անուշից
զբերեալս 'ի խորոյն արևելից։ Պատեաց
ծուխ թանձրամած զօդն, հաստատեաց
անխափան յամենայն ամի զթախծադին յի-
շատակութիւն 'ի պատիւ Աստինի և Աբիս-
տոնովսի։ Գայլն անդ 'ի նաւակատիս տօ-
նախմբութեան բնակիչք երջանիկն Գարիոյ
և 'ի զանազան գաւառաց պաշտպանեցելոց
'ի Մէանարէ, որ ակամայ թուի հրաժա-
ռիլ 'ի տեղեացն առոգելոց գեղուքն Գայ-
խարի։ յեզերացն Պաքտոլի գեղոյն որոյ
ընդ կոհակաք թաւալաղլոր երթան ման-
ուրք ոսկւոյ։ 'Ի Պամբիլիոյ՝ զոր Դեմեար,
Պանն, և Փղորայ զարդարէն մի զմիով։
Նաև 'ի լայնարձակ դաշտէ Կիլիկիայ առո-
գելոյ իբր զպարտէզ։ 'Ի հեղեղաց հոսելոց
'ի լերանց Տորոսի, որոյ ծածկեալ է միշտ
գագաթն ձեամբ։ Յաւուրս այս հանդիսի
մանկունք մատաղատունկք օրիորդք գեղա-
փրթիթք, երիտասարդք և երիտասարդու-
հիք զարդարեալք լայնաքղանդ հանդերձիւք
սպիտակաք քան զշուշան, երգեն զերգս օրհ-
նութեան 'ի պատիւ երկոցունց երանե-

լեայ. զի ոչ կարեն զոմարանել զմին ա-
ռանց միւսոյն, զանբաժան զուգակցորդքն
և յետ մահու։

Աքանչելի քան զամենայն այս է. զի
յառաջագոյն յօրէ անտի մինչ Սուրբոնի-
մոս առնէր նաւիրումն զինուոյ և կաթին,
բուսաւ 'ի միջոյ գերեզմանին մրտենի մի
կանաչագոյն և գերազնիւ հոտով, և բարձ-
բացոյց իսկոյն զվարսաւոր գլուխ իւր 'ի
հովանաւորել զերկոսին սափորս արժանա-
պատիւս։ Զոչեաց ամբոխն զարմացմամբ
յոյժ, թէ Աբիսաղոմս 'ի վարձ փոխարինի
Աստուածոյ 'ի բոյսս յայս ընտիր։ Խնամ կալաւ Սուրբ-
բոնիմոս առոգել զնա ձեռամբ իւրով և
պաշտել իբր զպեղ աստուածահրաշ։
Օրատս այս անծերանալի վերանորոգի յիւ-
րաքանչիւր տասնեակս ամաց. կամեցան
Աստուածք սովին հրաշիւք ցուցանել թէ
'ի յիշողութեան մարդկան՝ բարեբոյր, պատ-
ուական և անմահ է Աստուածութիւնն։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ-ՍՍՀ Գ.
Կա. А. Мясникяна
Ա. ՄԵՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

104